ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (Ք. ԼԱՍ ՎԵԳԱՍ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Նարեկ Մելքումյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գլխավոր քարտուղար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Քաղաք Լաս Վեգաս (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), 2022թ. հունվարի 4-ից 8-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Ամերիկյան «Սպառողների տեխնոլոգիաների ասոցիացիա» (այսուհետ՝ «CTA»):

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Սպառողների էլեկտրոնիկայի միջազգային ցուցահանդես 2022» (այսուհետ՝ «CES») միջոցառմանը:

6. **Քննարկված թեմաները.**

   Միջոցառման շրջանակներում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանը մասնակցել է մի շարք պանելային քննարկումների, մասնավորապես՝

- «Խելացի քաղաքներ», որի շրջանակներում քննարկվել է խելացի քաղաքների տեխնոլոգիաների դերը կլիմայի փոփոխությունների կանխատեսման և դրանց նկատմամբ հարմարվողականության ձևավորման գործընթացում,

- «Ճանապարհ դեպի ավելի լավ 5-րդ սերնդի աշխարհ», որի ընթացքում դիտարկվել է 5-րդ սերնդի տեխնոլոգիաների ազդեցությունը մարդու կենսակերպի վրա, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել 5-րդ սերնդի տեխնոլոգիաների նշանակությանն արդյունաբերության զարգացման և ապագայի ձևավորման գործընթացում,
- «Անօդաչուների ընդլայնվող աշխարհը» պանելային քննարկման ընթացքում դիտարկվել է անօդաչու թռչող սարքերի դերը անընդհատ փոփոխվող աշխարհում, մասնավորապես՝ նոր մարտահրավերների հաղթահարման գործում,
- «Արհեստական բանականություն. ակնկալիքներ, կանոնակարգեր և ձեռքբերումներ», որի ընթացքում նշվել է, որ արհեստական բանականության ոլորտում վերջին տասնամյակների ընթացքում զգալիորեն ավելացել են ներդրումները, սակայն առկա են խնդիրներ ոլորտի կարգավորման իրավական մեխանիզմների հստակեցման շուրջ,
- «Տեխնիկա և կառավարություն. ինչպե՞ս են կանխվում կիբեռհարձակումները». Պետական և մասնավոր հատվածի առաջատար ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկումներ են տեղի ունեցել կիբեռանվտանգության, կիբեռհարձակումների, առկա և հնարավոր սպառնալիքների դեմ կանխարգելիչ միջոցների վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

«CTA» ընկերության նախագահ և գործադիր տնօրեն Գերի Շապիրոյի և «CES» միջոցառման գործադիր փոխնախագահ Քերընը Չուպկայի մասնակցությամբ քննարկվել են 21-րդ դարում ապագան ձևավորող տեխնոլոգիական միտումներն ու նորարարական քաղաքականության ուղղությունները: Միջոցառման կազմակերպիչների, մասնավորապես՝ «CTA» ընկերության միջազգային առևտրի գծով համակարգող Գուանրոնգ Լիի և միջազգային ծրագրերի գծով համակարգող, փոխտնօրեն Ջոն Թ. Քելիի հետ տեղի են ունեցել բանակցություններ, որոնց ընթացքում նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ հաջորդ տարի կայանալիք «CES 2023» ցուցահանդեսին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատվիրակության՝ միասնական տաղավարով հանդես գալու վերաբերյալ:

Միջոցառման ընթացքում «General Motors» ընկերության նախագահ և գործադիր տնօրեն Մերի Բարան նկարագրել է ընկերության գործունեությունը, ներկայացրել կազմակերպության

մոտեցումներն ու ուղենիշերն էլեկտրականության դարաշրջանում շարժունակության լիովին նոր հնարավորությունների տրամադրման վերաբերյալ:

Այցելություններ և հանդիպումներ են տեղի ունեցել ավելի, քան 10 երկրների տաղավարներ, այդ թվում՝ Նիդերլանդների, Ճապոնիայի, Իսրայելի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Հարավային Կորեայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, որի ընթացքում տաղավարների պատասխանատուները և ընկերությունների ներկայացուցիչները ներկայացրել են իրենց պետություններում գործող սկսնակ ընկերությունների գործունեությունը, տրամադրել տեղեկատվություն նրանց կողմից ստեղծվող արտադրանքի և ծառայությունների վերաբերյալ: Վերջիններիս հետ քննարկվել են նաև ցուցահանդեսի մասնակցության առավելություններն ու ընձեռած հնարավորությունները:

Հանդիպումների ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանը միջազգային գործընկերներին և հետաքրքրվող ընկերությունների ներկայացուցիչներին ներկայացրել է Հայաստանի ներդրումային միջավայրի հիմնական ուղղություններն ու տարածաշրջանում Հայաստանի մրցակցային առավելությունները, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրային մոտեցումները միջազգային համագործակցության խթանման նկատմամբ:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև հայկական և հայկական ակունքներ ունեցող մի քանի ընկերությունների հետ, որոնք նախկինում ևս մասնակցել են «CES» ցուցահանդեսին, քննարկվել են տվյալ միջոցառման արդյունավետությունն ու միասնական տաղավարով ներկայանալու հեռանկարներն ու հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանում գործող սկսնակ ընկերությունների, ընդհանուր սկսնակ կազմակերպությունների էկոհամակարգի զարգացման գործընթացում վերջիններիս մասնակցության, մասնավորապես՝ փորձի փոխանակման հնարավորությունը:

Հանդիպում է կայացել նաև Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրդյանի և խորհրդական Վարազդատ Պահլավունու հետ, որի ընթացքում քննարկվել է «CES 2023» միջոցառմանը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատվիրակության մասնակցության հնարավորությունը, ինչպես նաև միջոցառման մասնակցության կազմակերպման շրջանակներում ամերիկյան առանձին ընկերությունների հետ փոխգործակցության նպատակահարմարությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում միջոցառման կազմակերպիչների հետ հանդիպումների արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել շարունակել բանակցությունները «CES 2023» ցուցահանդեսին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատվիրակության մասնակցության կազմակերպման աշխատանքների իրականացման վերաբերյալ: Միջոցառման կազմակերպիչներն իրենց հերթին պարտավորվել են առաջիկայում ներկայացնել «CES 2023» միջոցառման մասնակցության կարգն ու պայմանները և ակտիվ աշխատել ՀՀ ԲՏԱ նախարարության համապատասխան կոնտակտային անձանց հետ՝ նախապատրաստական աշխատանքների պատշաճ իրականացման համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Նարեկ Մելքումյան

12.01.2022թ.